ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ-ՅՈՀՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԲԱԲԿԵՆԻ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑՄԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (գերմաներեն լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, դոկտոր, պրոֆեսոր **Մելանյա Գրիգորի Աստվածատրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Երվանդի Դալյան**
	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սիրանուշ Գևորգի Պապոյան**
Առաջատար կազմակերպություն՝	**Ռուս-Հայկական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 13:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ.-ի նոյեմբերի 25-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու  **դոցենտ՝Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Ժամանակակից բարձրագույն կրթության զարգացման պայմաններում օտար լեզուների ուսուցման արդյունավետության բարձրացումը շարունակում է մնալ լեզվամեթոդական հետազոտությունների կարևորագույն ուղղություններից մեկը:

Գերմաներենը՝ որպես միջազգային հաղորդակցության, գիտության, կրթության և մշակույթի կարևոր լեզուներից մեկը, բուհական ոչ մասնագիտական ուղղությունների ուսումնական ծրագրերում ևս ձեռք է բերում նշանակալի դեր: Սակայն ոչ մասնագիտական դասընթացներում գերմաներենի ուսուցման գործընթացը հաճախ սահմանափակվում է հիմնականում հաղորդակցական նվազագույն կարողությունների ձևավորմամբ, մինչդեռ լեզվի կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես՝ բառակազմական համակարգի գիտակցված յուրացման հարցերը բավարար չափով մեթոդական մշակվածություն չունեն:

Գերմաներենի բառապաշարի զարգացման կարևորագույն միջոցներից է **բայական նախածանցումը**, որը բնորոշվում է բայերի իմաստային փոփոխության, բառային նոր միավորների ձևավորման և լեզվական ճկունության ապահովման բարձր ներուժով:

Հետազոտության ուսումնասիրվածության աստիճանը

Գերմաներենի ուսուցման մեթոդիկայի, բառապաշարի յուրացման, բառակազմական միջոցների և բայական նախածանցման լեզվական ու մեթոդական առանձնահատկությունների հիմնախնդիրները ուսումնասիրվել են լեզվաբանության, լեզվադիդակտիկայի և օտար լեզուների ուսուցման տեսության շրջանակներում:

Օտար լեզուների ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմնադրույթների մշակման գործում նշանակալի ներդրում ունեն Ե. Ի. Պասովի, Ի. Լ. Բիմի, Ն. Դ. Գեզի և այլ հետազոտողների աշխատությունները: Հաղորդակցական կարողությունների և միջմշակութային հաղորդակցության զարգացման տեսական հիմքերն արտացոլվել են Մ. Բայրամի, Ջ. Ռիչարդսի, Ռ. Էլիսի և այլ հետազոտողների աշխատություններում: Գերմաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման համատեքստում բառակազմական միջոցների յուրացման և դրանց մեթոդական ապահովման հիմնախնդիրներին անդրադարձել են Ա. Մակը, Հ. Էլզենը, Յ. Տարգոնսկան, Ս. Բերտոլոն և այլ հետազոտողներ:

Միաժամանակ, դրանց համադրական վերլուծությունը ցույց է տալիս գերմաներենի բայական նախածանցման ուսուցման՝ ոչ մասնագիտական դասընթացի առանձնահատկություններին համապատասխան ամբողջական մեթոդական համակարգի մշակման անհրաժեշտությունը:

Վերոնշյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ մշակել և տեսականորեն ու փորձարարությամբ հիմնավորել գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական համակարգը ոչ մասնագիտական դասընթացում:

Հետազոտության օբյեկտը գերմաներենի ուսուցման գործընթացն է բարձրագույն ուսումնական հաստատությունների ոչ մասնագիտական դասընթացներում:

Հետազոտության առարկան գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական համակարգն է:

Հետազոտության վարկածը. ենթադրվում է, որ գերմաներենի բայական նախածանցման ուսուցման արդյունավետությունը ոչ մասնագիտական դասընթացում կարող է էապես բարձրանալ, եթե՝

- ուսուցման գործընթացը կառուցվի բայական նախածանցման լեզվական համակարգային առանձնահատկությունների հաշվառմամբ,
- մշակվի գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական համակարգ՝ ներառելով նպատակային, բովանդակային, գործընթացային և գնահատողական բաղադրիչներ,
- կիրառվեն հաղորդակցական, ճանաչողական, համատեքստային և թվային ուսուցման տեխնոլոգիաներ,
- ապահովվի սովորողների կողմից նախածանցավոր բայերի ոչ միայն ճանաչումը, այլև ստեղծագործական և հաղորդակցական կիրառումը:

Հետազոտության նպատակով և վարկածով պայմանավորված առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

1. Վերլուծել գերմաներենի բայական նախածանցման ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմքերը:
2. Բացահայտել գերմաներենի բայական նախածանցների լեզվական առանձնահատկությունները և դրանց ուսուցման դժվարությունները:
3. Ուսումնասիրել օտար լեզվի բառապաշարի և բառակազմության ուսուցման ժամանակակից մոտեցումները:
4. Որոշել ոչ մասնագիտական դասընթացում գերմաներենի բայական նախածանցման ուսուցման բովանդակային ընտրության սկզբունքները:
5. Մշակել գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական համակարգ՝ ներառելով նպատակները, բովանդակությունը, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները և գնահատման չափանիշները:
6. Մշակել վարժությունների համակարգ՝ ուղղված նախածանցների և բայական կառուցվածքային և կառուցվածքաիմաստային կաղապարների ճանաչմանը և ըմբռնմանը, նախածանցավոր բայերի յուրացմանը, ինչպես նաև վերջիններիս տարբերակման և ուսուցման փուլերը:
7. Փորձարկել բայական նախածանցման մշակված ռազմավարության մոդելը:
8. Փորձարարական ճանապարհով ստուգել մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել՝

- օտար լեզուների ուսուցման ժամանակակից լեզվադիդակտիկական, կիրառական լեզվաբանական և լեզվաբանական տեսությունները,
- օտար լեզուների ուսուցման հաղորդակցական և գործունեային հայեցակարգերը, որոնք մշակվել են Ե. Ի. Պասովի, Ի. Լ. Բիմի, Ջ. Ս. Ռիչարդսի և Ռ. Էլիսի աշխատություններում,
- բառապաշարի ուսուցման և լեզվական կարողունակության ձևավորման ժամանակակից տեսությունները, որոնք ներկայացված են Փ. Նեյշընի, Ն. Շմիթի և Մ. Լյուիսի աշխատություններում,
- գերմաներենի բայական նախածանցման լեզվաբանական հիմքերին վերաբերող Վ. Ֆլայշերի, Ի. Բարցի, Պ. Այզենբերգի և Հ. Յ. Հերինգերի աշխատությունները,
- կարողունակահեն մոտեցման տեսական հիմքերը, որոնք ներկայացված են Ֆ. Է. Վայներտի, Ջ. Ռավենի, Մ. Գ. Աստվածատրյանի աշխատություններում,
- ձևաբանական գիտակցության և ճանաչողական լեզվադիդակտիկայի ժամանակակից դրույթները,
- Եվրոպայի խորհրդի «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ» (Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment – CEFR, 2001) փաստաթղթի և դրա Companion Volume with New Descriptors (2020) լրացված հրատարակության դրույթները, որոնք սահմանում են օտար լեզուների ուսուցման, հաղորդակցական լեզվական կարողունակությունների ձևավորման և ուսումնառության արդյունքների գնահատման ժամանակակից եվրոպական չափորոշիչները:

Հետազոտության մեթոդները

Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական և էմպիրիկ հետևյալ մեթոդները՝

- **տեսական**՝ հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական, մեթոդական, մասնագիտական գրականության, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի վերլուծություն, համեմատական և ընդհանրացման մեթոդներ, մանկավարժական մոդելավորում,
- **էմպիրիկ** մեթոդներ՝ ուսումնական գործընթացի դիտարկում, զրույց, անկետավորում, հարցազրույց, փորձարարական հետազոտության տվյալների վերլուծություն, դրանց մշակման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազա են հանդիսացել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, օտար լեզուների ֆակուլտետների երրորդ և չորրորդ կուրսերում՝ գերմաներենը որպես օտար լեզվի և որպես երկրորդ օտար լեզվի ուսուցման խմբերը:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (2016-2019) ուսումնասիրվել է հետազոտության

հիմնախնդրին նվիրված գրականությունը, որոշվել է հետազոտության հիմնախնդիրը, սահմանվել է նպատակը, առաջադրվել են գիտական վարկածը և հետազոտության խնդիրները, հստակեցվել են հետազոտության հիմնական ուղղությունները, մշակվել է փորձարարական հետազոտության մեթոդիկան:

Երկրորդ փուլում (2019-2022) ձևավորվել են փորձարարական խմբերը, ձևակերպվել են հետազոտության հիմնադրույթները, անցկացվել է հաստատող փորձարարություն, վերլուծվել են ստացված տվյալները, նախանշվել են հետազոտության հետագա ուղղությունները:

Երրորդ փուլում (2023-2026) մանկավարժական նոր մոտեցումների և պետական նոր չափորոշիչների համատեքստում վերանայվել են մեր հայեցակարգային և ռազմավարական մոտեցումները, որոնց հիման վրա **տեսականորեն հիմնավորվել և մշակվել է գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական համակարգը ոչ մասնագիտական դասընթացում,** դրա արդյունավետության ստուգման նպատակով իրականացվել է մանկավարժական փորձարարություն, մշակվել, համեմատվել, համակարգվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, ուղիներ են նշվել դրանց գործնականում կիրառման համար:

Հետազոտության գիտական նորույթը.

- գրականության համակողմանի վերլուծության հիման վրա հստակեցվել և տեսականորեն հիմնավորվել են գերմաներենի բայական նախածանցման ուսուցման լեզվաբանական, հոգեբանամանկավարժական և լեզվադիդակտիկական հիմքերը՝ ոչ մասնագիտական դասընթացի առանձնահատկությունների հաշվառմամբ,
- բացահայտվել և բնութագրվել են գերմաներենի բայական նախածանցների ուսուցման կազմակերպման լեզվադիդակտիկական առանձնահատկությունները, և սկզբունքները, իրականացվել է նախածանցավոր բայերի մեթոդական տիպակացում,
- առաջարկվել և գիտականորեն հիմնավորվել է գերմաներենի բայական նախածանցման ուսուցման ամբողջական մեթոդական համակարգ, որը ներառում է նպատակային, բովանդակային, գործընթացային, տեխնոլոգիական և գնահատողական փոխկապակցված բաղադրիչներ և ապահովում է ուսուցման համակարգված կազմակերպումը,
- մշակվել է բայական նախածանցների ուսուցման բազմաստիճան առաջադրանքների և վարժությունների համակարգ, որն ապահովում է նախածանցավոր բայերի իմաստային ընկալման, ձևաբանական վերլուծության, համատեքստային կիրառման և հաղորդակցական օգտագործման փուլային զարգացումը,
- մշակվել է գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական մոդել, որը համադրում է ավանդական լեզվադիդակտիկական սկզբունքները Ժամանակակից եվրոպական լեզվակրթական չափորոշիչների (CEFR, Companion Volume, 2020), թվային կրթական տեխնոլոգիաների,

փոխներգործուն ուսուցման և ձևաբանական գիտակցության (Morphological Awareness) զարգացման մոտեցումները,

- մշակվել և փորձարարական ճանապարհով ստուգվել են սովորողների բայական նախածանցների յուրացման, բառաստեղծական կարողությունների, բառապաշարի հարստացման և հաղորդակցական կիրառման գնահատման չափանիշներն ու ցուցանիշները:

Հետազոտության տեսական նշանակությունը

- Սույն հետազոտության շրջանակում տրվել է «գերմաներենի նախածանցավոր բայերի լեզվաբանական կարողություն» հասկացության հեղինակային սահմանումը,
- տեսականորեն հիմնավորվել է գերմաներենի նախածանցավոր բայերի ուսուցման մեթոդական համակարգի կառուցվածքը, որի բաղադրիչներն են ուսուցման նպատակը, բովանդակությունը, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները, կազմակերպման ձևերը և գնահատման չափանիշները,
- ընդլայնվել և բնութագրվել են գերմաներենի բառապաշարի և բառակազմության ուսուցման տեսական մոտեցումները՝ նախածանցավոր բայերը դիտարկելով ոչ միայն որպես բառային միավորներ, այլ որպես լեզվական համակարգի իմաստային և կառուցվածքային օրինաչափությունների արտահայտություն:

Հետազոտության գործնական նշանակությունն արտահայտվում է հետևյալ դրույթներում.

- մշակված և տեսականորեն հիմնավորված **գերմաներենի նախածանցավոր բայերի ուսուցման մեթոդական համակարգը** կարող է կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատությունների ոչ մասնագիտական ֆակուլտետներում գերմաներենի դասընթացների կազմակերպման և իրականացման գործընթացում,
- մշակված **ուսումնական նյութերի ընտրության և համակարգման սկզբունքները,** առաջարկված **վարժությունների և առաջադրանքների համակարգը**, կարող են նպաստել նախածանցավոր բայերի գիտակցված յուրացմանը, բառապաշարի ընդլայնմանը և լեզվական ինքնուրույնության զարգացմանը,
- մշակված **գերմաներենի նախածանցավոր բայերի լեզվաբանական կարողության ձևավորման չափանիշները, ցուցանիշները և մակարդակները** կարող են կիրառվել սովորողների լեզվական առաջընթացի գնահատման, հայտորոշման և ուսումնական գործընթացի արդյունավետության վերահսկման նպատակով:

Պաշտպանության ներկայացվող դրույթները

1. **Գերմաներենի նախածանցավոր բայերի ուսուցումը ոչ մասնագիտական դասընթացում** արդյունավետ է այն դեպքում, երբ այն հիմնվում է լեզվաբանական, լեզվադիդակտիկական և հաղորդակցական մոտեցումների ինտեգրման վրա՝ հաշվի առնելով նախածանցավոր բայերի կառուցվածքային,

բառակազմական, իմաստաբանական և քերականական առանձնահատկությունները:

2. Գերմաներենի նախածանցավոր բայերի ուսուցման մեթոդական համակարգը, որը ներառում է նպատակային, բովանդակային, գործընթացային, տեխնոլոգիական և գնահատողական բաղադրիչներ, ապահովում է ուսուցման գործընթացի ամբողջական, համակարգային և արդյունավետ կազմակերպումը ոչ մասնագիտական դասընթացում:
3. Նախածանցավոր բայերի ուսուցման բովանդակության ընտրության և կառուցման գիտականորեն հիմնավորված սկզբունքների (համակարգայնություն, փուլայնություն, գործառականություն, հաղորդակցական ուղղվածություն, կիրառականություն) հաշվառումը նպաստում է ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը և սովորողների լեզվաբանական կարողության զարգացմանը:
4. Գերմաներենի նախածանցավոր բայերի ուսուցման մշակված բազմաստիճան վարժությունների համակարգը, որը ներառում է ճանաչողական, վերլուծական, վերարտադրողական և ստեղծագործական-հաղորդակցական առաջադրանքներ, ապահովում է սովորողների բառակազմական մտածողության զարգացումը, բառապաշարի ընդլայնումը և նախածանցավոր բայերի գործնական կիրառման կարողության ձևավորումը:
5. Առաջարկված մեթոդական համակարգի փորձարարական ստուգման արդյունքները հաստատում են դրա արդյունավետությունը, քանի որ դրա կիրառումը նպաստում է ոչ մասնագիտական դասընթացներում սովորողների գերմաներենի նախածանցավոր բայերի գիտակցված յուրացմանը, լեզվաբանական կարողունակության զարգացմանը և հաղորդակցական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են հիմնախնդրի շրջանակներում փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մեթոդական ու մասնագիտական գրականության, տեսությունների ու հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության նպատակին, առարկային ու խնդիրներին համարժեք ընտրված մեթոդներով, տեսական հետազոտության փորձարարական հիմնավորմամբ, փորձարարական հետազոտության տվյալների վերլուծությամբ, ամփոփմամբ և հիմնավորված եզրահանգումներով:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ՀՊՄՀ ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, տարբեր հոդվածներում և գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքով 160 էջ: Աշխատանքում ներառված են 6 աղյուսակ, 18 տրամագիր, 1 գծապատկեր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Գերմաներենի բայական նախածանցման ուսուցման մեթոդական համակարգի տեսական-մեթոդաբանական հիմքերը»** խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Գերմաներենի բայական նախածանցների ուսուցման վերաբերյալ գիտական տեսությունների քննական վերլուծությունը»** բացահայտվել և քննական վերլուծության են ենթարկվել գերմաներենի բայական նախածանցների ուսուցման գիտատեսական հիմքերը երկու փոխկապակցված հարթություններում: Առաջին հարթությունը վերաբերում է նախածանցավոր և մասնիկավոր բայերի լեզվաբանական բնույթին, երկրորդը վերաբերում է դրանց յուրացման հոգեբանական ու մեթոդական մեխանիզմներին՝ լեզվական ձևի գիտակցական ընկալմանը, ձև–իմաստ կապի հաստատմանը, մայրենի լեզվի ազդեցությանը, գործողությունների փուլային ձևավորմանը և հաղորդակցական կիրառության ավտոմատացմանը:

Դիտարկված և համադրված են հիմնախնդրի վերաբերյալ՝ **ձևաբանական-շարահյուսական և հնչյունաբանական փոխկապակցման, կազմաբանական իմաստաբանության և իմաստային թափանցիկության շարունակականության, ճանաչողական իմաստաբանության և պատկերային սխեմաների, կոնստրուկցիոն քերականության (քերականական կառուցույթների), գիտակցական նկատման, ներածության մշակման, հմտությունների յուրացման, սոցիալ-մշակութային և միջնորդավորված ուսուցման, հակադրական վերլուծության և լեզվական փոխանցման, լեզվական ձևի համատեքստային շեշտադրման տեսությունները:** Դրանց հիման վրա առաջադրվել է գիտատեսական այն դրույթը, որ գերմաներենի բայական նախածանցների արդյունավետ յուրացումը ձևավորվում է այն դեպքում, երբ նախածանցավոր բայը ներկայացվում է որպես ձևի, սխեմատիկ և համատեքստային իմաստի, շարահյուսական կառուցվածքի, հնչյունաբանական արտահայտության ու հաղորդակցական գործառույթի ամբողջական **քերականական կառուցույթ** (կոնստրուկցիա), իսկ դրա յուրացումն ընթանում է գիտակցական նկատումից և ձև–իմաստ կապի հաստատումից դեպի ընթացակարգայնացում ու հաղորդակցական ավտոմատացում:

Երկրորդ ենթագլխում՝ «**Ժամանակակից մանկավարժական մոտեցումների ինտեգրումը գերմաներենի բայական նախածանցների ուսուցման մեթոդական համակարգում», դիտարկված և քննական վերլուծության են ենթարկված** հետազոտության մեթոդաբանական հիմքում դրված համակարգային, գործունեային, ճանաչողական (կոգնիտիվ), անձնակենտրոն, ինտեգրված, թվային, հոլիստիկ և իմերսիոն, անձնակենտրոն, ինտեգրված և թվային մոտեցումների կիրառման հնարավորությունները գերմաներենի բայական նախածանցների ուսուցման գործընթացում: Սույն հետազոտության տեսանկյունից վերոնշյալ հայեցակարգային մոտեցումների համադրական վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ գերմաներենի բայական

նախածանցների ուսուցման մեթոդական համակարգը պետք է կառուցվի ինտեգրված դիդակտիկական մոդելի վրա: Այդ պատճառով սույն ատենախոսությունում առաջարկվում է **գերմաներենի բայական նախածանցման ինտեգրված մեթոդաբանական մոդելը**:

Երրորդ ենթագլխում՝ **«Գերմաներենի բայական նախածանցների ուսուցման հեղինակային հայեցակարգը ոչ մասնագիտական բարձրագույն կրթության պայմաններում»,** ներկայացված են հեղինակային հայեցակարգի հիմնարար դրույթները, տեսական կառուցվածքը և կառուցվածքային բաղադրիչների փոխազդեցությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Գերմաներենի բայական նախածանցման մեթոդական համակարգի կառուցվածքի բնութագիրը» բաղկացած է չորս ենթագլխից:**

Առաջին ենթագլխում՝ **«Գերմաներենի բայական նախածանցների ուսուցման առանձնահատկությունները և սկզբունքները»,** բացահայտված և բնութագրված են գերմաներենի բայական նախածանցների ուսուցման հիմնական առանձնահատկությունները:Սահմանված և բնութագրված են գերմաներենի բայական նախածանցների ուսուցման սկզբունքները:

Երկրորդ ենթագլխում՝ **«Գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում բայական նախածանցման ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, ձևերն ու միջոցները», հիմնավորվում է, որ** գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում բայական նախածանցման ուսուցումը պահանջում է մեթոդների, մանկավարժական տեխնոլոգիաների, կազմակերպական ձևերի և ուսուցման միջոցների նպատակային համադրում: Դրանց ընտրությունը պայմանավորված է գերմաներենի նախածանցավոր բայերի ձևաբանական, իմաստային, հնչյունաբանական և շարահյուսական առանձնահատկություններով, ինչպես նաև ոչ մասնագիտական դասընթացի սահմանափակ ժամաքանակով: Ներկայացված և բնութագրված են մեր կողմից ընտրված և առաջարկված մեթոդները, տեխնոլոգիաները, ուսուցման կազմակերպման ձևերը, միջոցները: Ներկայացված է մշակված մեթոդական համակարգի կառուցվածքային մոդելը:

Երրորդ ենթագլխում՝ «**Գերմաներենի բայական նախածանցման չափանիշները», հիմնավորվում է, որ** գերմաներենի բառակազմության համակարգում կարևոր տեղ են գրավում բուն նախածանցավոր և կիսանախածանցավոր բայերը, որոնք գործում են բայերի բառաքերականական կարգում: Այդ համատեքստում ներկայացված են կիսանախածանցավոր բայերի հիմքում ընկած գործոնները: Դիտարկված են բայական նախածանցների կառուցվածքային և կառուցվածքաիմաստային կաղապարների կարգավիճակը, իմաստային ոլորտի փոխակերպումը, ինչպես նաև ընկալման դժվարություններն ու նախածանցման հետ կապված գործոնները: Ներկայացված են բայական նախածանցման լեզվաբանական և մեր կողմից առաջարկվող բայական նախածանցման ուսուցման **լեզվաբանական, մեթոդական չափանիշները**:

Դիտարկված և բնութագրված են գերմաներենի բայական նախածանցավոր և կիսանախածանցավոր կառուցվածքային կաղապարները: Մեթոդական նպատակներով իրականացվել է բառակազմական կաղապարների սահմանազատում՝ կառուցվածքային և կառուցվածքաիմաստային հատկանիշների տարանջատմամբ: Բառակազմական կաղապարների բաղադրիչների կազմի ուսումնասիրության հիման վրա առանձնացվել է կառուցվածքային նախածանցավոր կաղապարների համակարգը, որը հնարավորություն է տալիս դասակարգելու բաղադրող հիմքերը՝ ըստ դրանց բառաքերականական պատկանելության:

Չորրորդ ենթագլխում՝ **«Գերմաներենի բայական կառուցվածքաիմաստային կաղապարների ընտրության չափանիշները»,** ներկայացվել և մեկնաբանվել են սահմանված ընտրության չափանիշները՝ ընտրության ընթացակարգը, ընտրության սկզբունքները: Գերմաներենի բայական նախածանցավոր կազմությունների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են նախածանցների և բաղադրող հիմքերի իմաստային ընտրողականության օրինաչափությունները, առանձնացվել և դասակարգվել են դրանց **կառուցվածքային ու կառուցվածքաիմաստային կաղապարների ընտրության չափանիշները**: Գերմաներենի բայական նախածանցավոր կազմությունների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են նախածանցների և բաղադրող հիմքերի իմաստային ընտրողականության օրինաչափությունները, առանձնացվել և դասակարգվել են դրանց կառուցվածքային ու կառուցվածքաիմաստային կաղապարները:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում բայական նախածանցման ուսուցման մշակված մեթոդական համակարգի փորձարարական հիմնավորումը»**, բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Սովորողների հայտորոշիչ ստուգումը թեստավորման միջոցով (նախափորձարարական թեստավորում)»,** ներկայացված են բայական նախածանցավոր բառակազմական կաղապարների ճանաչման և ընկալման հմտությունների ու կարողությունների տիրապետման սկզբնական մակարդակը որոշելու նպատակով իրականացված նախափորձարարական թեստավորման ընթացքը և արդյունքները:

Նախափորձարարական թեստավորմանը մասնակցել են ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի, օտար լեզուների (որպես երկրորդ օտար լեզու) ֆակուլտետների երրորդ և չորրորդ կուրսերի 60 ուսանող: Թեստավորման ընթացքում բոլոր մասնակիցների համար ապահովվել են հավասար պայմաններ: Թեստը ներառել է վեց առաջադրանք:Թեստավորման արդյունքների վերլուծության հիման վրա առանձնացվել են սովորողների համար առավել բարդ նախածանցավոր կաղապարների խմբեր՝ ըստ նրանց ըմբռնման և իմաստային տարբերակման դժվարությունների:

Ներկայացված են թեստերի արդյունքների ստուգման և սխալների հաշվառման չափանիշները, թեստավորման արդյունքում գերմաներենի բայական

նախաձանցների ընկալման տիպական սխալների վերլուծությունը, որի արդյունքում բացահայտվեցին մի շարք տիպական սխալներ, որոնք խոչընդոտում են նախաձանցների իմաստի կռահմանը: Փորձարարական տվյալների վերլուծությունը ցույց տվեց նաև, որ գերմաներենի բայական նախաձանցավոր կառուցվածքային և կառուցվածքաիմաստային կաղապարների ընկալման դժվարությունները պայմանավորված են միաժամանակ մի քանի գործոններով:

Երկրորդ ենթագլխում **«Գերմաներենի բայական նախաձանցավոր և կիսանախաձանցավոր կառուցվածքաիմաստային կաղապարների մեթոդական տիպականացումը»,** անդրադարձ է կատարվել ընտրված բառակազմական նվազագույնի դասակարգման վերլուծությանը, ինչպես նաև տիպական սխալների գրանցմանը՝ կապված թյուրըմբռնման պատճառների հետ: Սահմանված են բայական նախաձանցների ընկալման համար անհրաժեշտ որոշակի մտավոր գործողությունների հերթագայությունը: Երրորդ ենթագլխում՝**«Նախաձանցավոր բայերի բառակազմության ուսուցման վարժությունների համակարգը»,** ելնելով կառուցվածքային և կառուցվածքաիմաստային կաղապարների առանձնահատկություններից, ինչպես նաև այն մտավոր գործողություններից, որոնք ներգրավված են ընթերցանության ժամանակ վերջիններիս ճանաչման և ընկալման գործընթացում, առաջարկվել են մի շարք վարժություններ, որոնք անհրաժեշտ են կառուցվածքային և կառուցվածքաիմաստային կաղապարների տարբեր տեսակների արդյունավետ յուրացման համար:

Չորրորդ ենթագլխում՝ «**Մշակված մեթոդական համակարգի փորձարկումը և արդյունքների վերլուծությունը», ներկայացված են** մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը գնահատելու նպատակով իրականացված փորձարարական ուսուցման արդյունքները:

Փորձարարական ուսուցման ժամանակը՝ 2025-2026թթ.: **Փորձարարական ուսուցման վայրը**՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: **Փորձարարական ուսուցմանը մասնակցել են** ՀՊՄՀ-ի սկզբնական կրթության, մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի լեզուների, օտար լեզուների (որպես երկրորդ օտար լեզու) ֆակուլտետների երրորդ և չորրորդ կուրսի 60 ուսանող: **Փորձարարական ուսուցման նյութն** ընդգրկում է մշակված վարժությունների համակարգը, տեքստի բովանդակության ստուգման առաջադրանքներն ու ռազմավարությունները: **Առանձնացվել են Փորձարարական ուսուցման հետևյալ փուլերը. 1-ին փուլ** - Լեզվական կարողունակության (բառապաշար, քերականական կառույցներ) ճշգրտում: **2-րդ փուլ** - Ռեցեպտիվ կարողությունների ձևավորում վարժությունների միջոցով: **3-րդ փուլ** – Թեստավորում: **4-րդ փուլ** - Ստուգում և արդյունքների վերլուծություն:

Փորձարարական ուսուցման նպատակն է ճշտել, թե որքանով է մշակված վարժությունների համակարգը դրական արդյունք տվել: Առաջարկվող վարժությունների համակարգը ենթարկվել է փորձարարական ստուգման՝ փորձարարական ուսուցման միջոցով: Փորձարարական ուսուցումն անցկացվել է տարբեր խմբերում՝ օգտագործելով տարբեր մեթոդներ:Ներկայացված են վեց առաջադրանքից կազմված հետփորձարարական թեստի արդյունքները: Բոլոր

առաջադրանքներն ուղղված են բայական նախածանցավոր և կիսանախածանցավոր կառուցվածքաիմաստային կաղապարների ընկալման ստուգմանը:

Աղյուսակ 6

Հետփորձարարական թեստավորման արդյունքները

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	ՊԱՏԱՍԽԱՆ			
	Ճիշտ է	**Սխալ է**	**Բացակայում է**	**Հնարավոր քանակ**
1.	435	154	11	600
2.	421	165	14	600
3.	457	131	12	600
4.	411	178	11	600
5.	423	164	13	600
6.	416	173	11	600
Ընդհ. պատ.	**2563**	**965**	**72**	**3600**
	71,2%	**26.8%**	**2,0%**	**100%**

Աղյուսակի տվյալների հիման վրա ներկայացված են սովորողների հետփորձարարական թեստավորման արդյունքների տրամագրերը:

Աղյուսակի և տրամագրերի ձևով ներկայացված են նաև նախափորձարարական և հետփորձարարական արդյունքների համեմատությունը (տոկոսային հարաբերակցությամբ):

Աղյուսակ 7

Նախափորձարարական և հետփորձարարական արդյունքների համեմատություն (տոկոսային հարաբերակցությամբ)

ՆԱԽԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԹԵՍՏ			ՀԵՏՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԹԵՍՏ		
Ճիշտ %	Սխալ %	Բացակայում է %	Ճիշտ %	Սխալ %	Բացակայում է %
29,4%	67,1%	3,5%	71,2%	26,8%	2,0%

Փորձարարական թեստավորման արդյունքների վերլուծության արդյունքում պարզվեց, որ նախափորձարարական և ստուգողական աշխատանքների տվյալների միջև բավականին մեծ տարբերություն կա: Նկատվել է սովորողների բայական նախածանցների ընկալման, գիտելիքների հասկացման մակարդակում յուրացման զգալի առաջընթաց. **Ձևաբանական իմացության մակարդակում՝** ուսանողները կարողացել են ճշգրիտ տարբերակել բաժանվող և չբաժանվող նախածանցավոր բայերը, ինչպես նաև կիսանախածանցավոր բայերը: **Իմաստային ընկալման մակարդակում՝** ուսանողները կարողացել են տարբերակել նախածանցավոր բայերի իմաստային նրբերանգները՝ կախված խոսքային իրավիճակից, ճիշտ ընտրել նույն հիմքով, բայց տարբեր նախածանցներով բայերը (օր.՝ *aufstehen, bestehen, verstehen*),

կռահել ընթերցանության ընթացքում բառիմաստը և լիարժեք ըմբռնել տեքստի բովանդակությունը:

Միաժամանակ արձանագրվել են որոշ լեզվական, բովանդակային սխալներ և անուշադրության վրիպակներ՝ քերականական սխալներ,

Այսպիսով, մշակված մեթոդական համակարգի փորձարարական ստուգման արդյունքները հավաստում են դրա արդյունավետությունը գերմաներենի նախածանցավոր և կիսանախածանցավոր բայերի ուսուցման, ինչպես նաև սովորողների ընթերցանական կարողությունների զարգացման գործընթացում:Նախափորձարարական և հետփորձարարական թեստավորման տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տվել ուսումնառության արդյունքների էական դրական շարժընթաց. ճիշտ պատասխանների միջին ցուցանիշը 29,4%-ից բարձրացել է մինչև 71,2%՝ արձանագրելով 41,8 տոկոսային կետի աճ: Միաժամանակ սխալ պատասխանների ցուցանիշը 67,1%-ից նվազել է մինչև 26,8%, իսկ բաց թողնված պատասխաններինը՝ 3,5%-ից մինչև 2,0%: Ստացված քանակական և որակական տվյալները հաստատում են առաջարկված մեթոդական համակարգի գիտամեթոդական հիմնավորվածությունը, արդյունավետությունը և գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում դրա կիրառման նպատակահարմարությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում բայական նախածանցման ուսուցման հիմնախնդրի տեսական ուսումնասիրությունը, լեզվական նյութի կառուցվածքաիմաստային վերլուծությունը, հեղինակային հայեցակարգի և մեթոդական համակարգի մշակումը, ինչպես նաև դրանց փորձարարական ստուգումը հնարավորություն են տվել ձևակերպելու հետևյալ ընդհանուր եզրակացությունները:

1. **Գերմաներենի բայական նախածանցումը լեզվական բազմաբաղադրիչ և մեթոդապես բարդ երևույթ է**, որի ուսուցումը չի կարող սահմանափակվել միայն նախածանցների ձևական դասակարգմամբ և քերականական կանոնների վերարտադրմամբ: Նախածանցավոր բայի յուրացումը ենթադրում է դրա ձևաբանական կառուցվածքի, իմաստային առանձնահատկությունների, շեշտադրության, նախածանցի բաժանվող կամ չբաժանվող բնույթի, շարահյուսական վարքագծի և հաղորդակցական գործառույթի միասնական ընկալում: Այդ պատճառով բայական նախածանցումը նպատակահարմար է ուսումնասիրել որպես ձևի, իմաստի և գործածության փոխկապակցված ամբողջություն:

2. Հետազոտության տեսական հիմքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գերմաներենի բայական նախածանցման արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ է համադրել լեզվաբանական, հոգելեզվաբանական, ճանաչողական և մանկավարժամեթոդական մոտեցումները: Կառուցվածքային, գործառական,

ճանաչողական, կառուցվածքաիմաստային և հաղորդակցական տեսությունների համադրումը հնարավորություն է տալիս բացահայտելու նախածանցի ոչ միայն բառակազմական, այլև իմաստաստեղծ ու հաղորդակցական գործառույթները:

3. Բայական նախածանցման լեզվաբանական առանձնահատկությունների բացահայտումը և վերլուծությունը հաստատել է, որ սովորողների հիմնական դժվարությունները պայմանավորված են բաժանվող, չբաժանվող, կիսանախածանցավոր և երկակի գործածություն ունեցող բայերի բազմազանությամբ: Առավել դժվար յուրացվող երևույթներն են նախածանցի դիրքի փոփոխությունը նախադասության մեջ:

4. Հիմնավորվել է, որ բայական նախածանցման ուսուցման սկզբունքները պետք է բխեն ինչպես ուսումնասիրվող լեզվական երևույթի առանձնահատկություններից, այնպես էլ ոչ մասնագիտական դասընթացի պայմաններից: Հետազոտությամբ առանձնացվել և կիրառվել են համակարգվածության և հաջորդականության, մատչելիության, կառուցվածքի ու իմաստի միասնության, հակադրականության, համատեքստայնության, հաղորդակցական ուղղվածության, փուլայնության, տարբերակման, մայրենի և օտար լեզուների նպատակահարմար համադրման, ինչպես նաև ուսուցման արդյունքների շարունակական վերահսկման սկզբունքները:

5. Հետազոտության ընթացքում մշակված հեղինակային հայեցակարգի առանցքային դրույթն այն է, որ բայական նախածանցումը պետք է ուսուցանվի **կառուցվածքաիմաստային կաղապարների համակարգի միջոցով**: Առաջադրված հեղինակային հայեցակարգում բայական նախածանցման ուսուցումը ներկայացվում է որպես նպատակային, համակարգված, փուլային և հաղորդակցականորեն պայմանավորված գործընթաց: Այն ներառում է լեզվական նյութի ճանաչումը, կառուցվածքային վերլուծությունը, իմաստային տարբերակումը, համատեքստային մեկնաբանումը, խոսքային կիրառումը, ինքնուրույն ստեղծագործական գործածությունը և ձեռք բերված գիտելիքների վերահսկումն ու ինքնագնահատումը:

6. Մշակված մեթոդական համակարգը կառուցված է նպատակային, բովանդակային, կազմակերպագործընթացային, տեխնոլոգիական, հայտորոշիչ-գնահատողական և արդյունքային բաղադրիչների փոխկապակցվածության հիման վրա: Բաղադրիչների փոխկապակցվածությունը մեթոդական համակարգին հաղորդում է ամբողջական, կառավարելի և վերարտադրելի բնույթ: Հաստատվել է, որ գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում բայական նախածանցման ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է ոչ թե մեկ գերիշխող մեթոդի, այլ փոխլրացնող մեթոդների նպատակային համադրմամբ: Թվային պատմասացության, նախագծային և խաղային մեթոդների կիրառումը մեծացնում է սովորողների մոտիվացիան և նպաստում լեզվական նյութի անձնային իմաստավորմանը:

7. Մեթոդական համակարգում հիմնավորվել է ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների՝ հաղորդակցական, հոլիստական, մասնակի իմերսիոն, համագործակցային, տարբերակված, խնդրահարույց, նախագծային,

խաղային, թվային, համակցված և պարուրաձև ուսուցման կիրառման նպատակահարմարությունը:

8. Ուսուցման կազմակերպական ձևերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ճակատային, անհատական, զույգային, խմբային, համագործակցային, դերային, լսարանային, արտալսարանային, առկա և առցանց աշխատանքի ձևերը պետք է կիրառվեն փոխկապակցված: Կազմակերպական ձևերի փոփոխությունը մեծացնում է սովորողների ներգրավվածությունն ու լեզվական ակտիվությունը:

9. Բայական նախածանցման ուսուցման միջոցների ընտրությունը պետք է համապատասխանի ուսումնասիրվող նյութի ձևաբանական, իմաստային և հնչյունական առանձնահատկություններին: Լեզվական, դիդակտիկ, տեսողական, լսողական, տեսալսողական և թվային միջոցների համակցումը նպաստում է նյութի բազմուղի ընկալմանը: Նախածանցների գունային տարբերակումը, կառուցվածքային սխեմաները, իմաստային քարտեզները, բառային քարտերը, ձայնագրությունները, գործողություններ պատկերող տեսանյութերը, էլեկտրոնային բառարաններն ու ինքնաստուգվող առաջադրանքները հնարավորություն են տալիս վերացական լեզվական օրինաչափությունները դարձնելու առավել տեսանելի, ընկալելի և կիրառելի:

10. Մշակված վարժությունների համակարգը պետք է կառուցվի պարզից բարդ, ճանաչումից դեպի ինքնուրույն կիրառում և վերարտադրությունից դեպի ստեղծագործական խոսք անցման տրամաբանությամբ: Այն ներառում է ընկալողական, ճանաչողական, տարբերակման, դասակարգման, համապատասխանեցման, փոխակերպման, համատեքստային, հաղորդակցական, ստեղծագործական առաջադրանքներ, որոնք հնարավորություն են տալիս սկզբում ձևավորելու նախածանցավոր բայերի կառուցվածքը ճանաչելու և կանոնը կիրառելու, տեքստի բովանդակությունը հասկանալու և սեփական խոսքում համապատասխան բայական միավորներ օգտագործելու կարողությունները:

11. Ընդհանրացնելով տեսական և փորձարարական հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ գերմաներենի ոչ մասնագիտական դասընթացում բայական նախածանցման ուսուցման մշակված մեթոդական համակարգը գիտականորեն հիմնավորված, կառուցվածքային առումով ամբողջական, գործնականորեն կիրառելի և արդյունավետ համակարգ է: Այն ապահովում է տեսական գիտելիքների, կառուցվածքաիմաստային վերլուծության, համատեքստային ընկալման, ընթերցանական կարողությունների և հաղորդակցական գործածության փոխկապակցված զարգացումը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Պետրոսյան-Յոհն Շ. Բ., Բառակազմական մոդելների ուսուցումը՝ որպես ներզոր (պոտենցիալ) բառապաշարի ընդլայնման արդյունավետ միջոց, ՀՀ ԿԳՆ և «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա ՀԿ, Որակյալ ուսուցման հիմնախնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցներում, մաս 2, Երևան, 2014, էջ 217-22:

2. Պետրոսյան-Յոհն Շ. Բ., Լեզվական բուհում ներզոր (պոտենցիալ) բառապաշարի ուսուցման դժվարությունները (գերմաներենի նախդրավոր բայերի նյութի հիման վրա), «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, ուսումնամեթոդական հոդվածներ 1(40), 2024/1, էջ 112-116:
3. Պետրոսյան-Յոհն Շ. Բ., Բառակազմական մոդելների ընտրության հիմնահարցը (գերմաներենի նախածանցավոր բայերի նյութի հիման վրա), «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան, գիտամեթոդական հոդվածներ, 2019/N1, էջ 54-66:
4. Պետրոսյան-Յոհն Շ. Բ., Աստվածատրյան Մ. Գ., Բառածանցումը որպես ածանցավոր մոդելների ընտրության և դասակարգման հիմք ժամանակակից գերմաներենում, Լեզու և լեզվաբանություն 1(28), Երևան 2023, էջ 18-25:
5. Պետրոսյան-Յոհն Շ. Բ., Գերմաներենի նախածանցավոր բայերի մեթոդական տիպականացման սկզբունքները բուհական դասընթացում: Տաթև գիտակրթական հանդիսիր, Մանկավարժական միտք 2025, 1-2, էջ 195-202:
6. Պետրոսյան-Յոհն Շ. Բ., Աստվածատրյան Մ. Գ., Գերմաներենի բայական նախածանցների դասակարգման հիմունքները, Տաթև գիտակրթական հանդիսիր, Մանկավարժական միտք 2025, 3-4, էջ 64-75:

ПЕТРОСЯН-ЙОН ШУШАНИК БАБКЕНОВНА

Методическая система обучения глагольной префиксации в немецком языке в условиях неспециального курса

Диссертация на соискание учёной степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - Методика преподавания и обучения (немецкий язык).

Защита диссертации состоится 25-го декабря 2026г. в 13:00 на заседании специализированного совета 020 «Педагогика» КВО Н РА, действующего при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна.

Адрес: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В условиях модернизации системы высшего образования повышение эффективности обучения иностранным языкам продолжает оставаться одним из приоритетных направлений лингводидактических исследований. Глобализация коммуникационных процессов, расширение межкультурного взаимодействия и возрастание профессиональной мобильности обусловливают необходимость не только формирования практических навыков владения иностранным языком, но и осознанного усвоения его системных языковых закономерностей.

Немецкий язык, являясь одним из значимых языков международного общения, науки, образования и культуры, занимает определённое место и в образовательных программах высших учебных заведений по неязыковым направлениям подготовки. Вместе с тем обучение немецкому языку студентов неязыковых направлений зачастую ориентировано преимущественно на формирование базовых коммуникативных умений, тогда как вопросы

осознанного усвоения структурных особенностей языка, в частности закономерностей его словообразовательной системы, нуждаются в дальнейшем методическом исследовании и разработке.

Особую методическую сложность представляет обучение глаголам с префиксами, поскольку их усвоение предполагает понимание структурных, словообразовательных и семантических особенностей, взаимосвязи префикса и производящей основы, а также особенностей употребления образованных глаголов в различных контекстах.

Вместе с тем их сопоставительный анализ свидетельствует о необходимости разработки целостной методической системы обучения глагольной префиксации в немецком языке, учитывающей особенности неспециального курса обучения

Цель исследования — разработать, теоретически обосновать и экспериментально проверить методическую систему обучения глагольной префиксации в немецком языке в рамках неспециального курса.

В соответствии с целью и гипотезой исследования были определены следующие **задачи:**

1. Проанализировать теоретические и методологические основы обучения глагольной префиксации в немецком языке.
2. Выявить лингвистические особенности немецких глагольных префиксов и трудности, возникающие при их усвоении.
3. Изучить современные подходы к обучению иноязычной лексике и словообразованию.
4. Определить принципы отбора и организации содержания обучения глагольной префиксации в немецком языке с учётом специфики неспециального курса.
5. Разработать методическую систему обучения глагольной префиксации в немецком языке, включающую цели, содержание, методы, технологии, средства обучения и критерии оценивания.
6. Разработать систему многоуровневых упражнений и заданий, направленную на распознавание и понимание префиксов, анализ структурных и структурно-семантических моделей образования глаголов, усвоение и дифференциацию глаголов с префиксами, а также их практическое и коммуникативное использование.
7. Разработать методическую модель реализации системы обучения глагольной префиксации и определить этапы её внедрения в учебный процесс.
8. Экспериментально проверить эффективность разработанной методической системы обучения глагольной префиксации в немецком языке.

Научная новизна исследования

- На основе комплексного анализа научной литературы уточнены и теоретически обоснованы лингвистические, психолого-педагогические и лингводидактические основы обучения глагольной префиксации в немецком языке с учётом специфики неспециального курса.

- Выявлены и охарактеризованы лингводидактические особенности и принципы организации обучения немецким глагольным префиксам, осуществлена методическая типологизация глаголов с префиксами с учётом их структурных и семантических характеристик.
- Разработана и научно обоснована целостная методическая система обучения глагольной префиксации в немецком языке, включающая взаимосвязанные целевой, содержательный, процессуальный, технологический и оценочный компоненты и обеспечивающая системную организацию учебного процесса в условиях неспециального курса.
- Разработана система многоуровневых упражнений и заданий, обеспечивающая поэтапное формирование у обучающихся умений распознавать и понимать префиксы, анализировать структурные и структурно-семантические модели глагольных образований, усваивать, дифференцировать и использовать глаголы с префиксами в контексте и коммуникативной деятельности.
- Разработана методическая модель реализации системы обучения глагольной префиксации, интегрирующая традиционные лингводидактические принципы, положения Общеевропейских компетенций владения иностранным языком (CEFR, Companion Volume, 2020), цифровые образовательные технологии, интерактивные методы обучения и подходы к развитию морфологической осознанности (Morphological Awareness).
- Разработаны и экспериментально проверены критерии, показатели и уровни оценки усвоения немецких глагольных префиксов, развития словообразовательных умений, обогащения словарного запаса и коммуникативного использования глаголов с префиксами.

Теоретическая значимость исследования

- Предложено авторское определение понятия «лингвистическая компетенция в области употребления немецких глаголов с префиксами».
- Теоретически обоснована структура методической системы обучения немецким глаголам с префиксами, включающая цель, содержание, методы, технологии, средства обучения, организационные формы и критерии оценивания.
- Расширены и систематизированы теоретические представления об обучении немецкой лексике и словообразованию посредством рассмотрения глаголов с префиксами не только как отдельных лексических единиц, но и как языковых образований, отражающих структурные и семантические закономерности немецкого языка.

Практическая значимость исследования

Практическая значимость исследования заключается в следующем:

- Разработанная и теоретически обоснованная методическая система обучения немецким глаголам с префиксами может применяться при организации и проведении курсов немецкого языка на неспециальных факультетах высших учебных заведений.

- Разработанные принципы отбора и систематизации учебных материалов, а также предложенная система упражнений и заданий могут способствовать осознанному усвоению глаголов с префиксами, расширению словарного запаса и развитию языковой самостоятельности обучающихся.
- Разработанные критерии, показатели и уровни сформированности лингвистической компетенции в области употребления немецких глаголов с префиксами могут использоваться для диагностики и оценки языкового прогресса обучающихся, а также для мониторинга эффективности учебного процесса.

Структура и объём диссертации

Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы и приложения.

Объём диссертации составляет 160 страниц компьютерного набора. В работе представлены 6 таблиц, 18 диаграмм и 1 схема.

PETROSYAN-JOHN SHUSHANIK BABKEN

A Methodological System for Teaching German Verb Prefixation in Non-Specialist Language Courses

Dissertation submitted in partial fulfillment of the requirements for the degree of Candidate of Sciences in Speciality 13.00.02 - Theory and Methodology of Teaching and Education (German Language).

The dissertation defense will take place on 25 December, 2026, at 13:00, at a meeting of the Specialized Council 020 «Pedagogy» of the HESC RA, operating at the Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan.

Address: 17 Tigran Mets Avenue, Yerevan 0010, Republic of Armenia.

SUMMARY

The aim of the research is to develop, theoretically substantiate, and experimentally verify a methodological system for teaching German verb prefixation in a non-specialist language course.

In accordance with the aim and hypothesis of the research, the following objectives have been formulated:

1. To analyze the theoretical and methodological foundations of teaching German verb prefixation.
2. To identify the linguistic characteristics of German verb prefixes and the difficulties encountered in their acquisition.
3. To examine contemporary approaches to teaching foreign-language vocabulary and word formation.
4. To determine the principles for selecting and organizing the content of German verb prefixation instruction, taking into account the specific characteristics of non-specialist language courses.

5. To develop a methodological system for teaching German verb prefixation, incorporating objectives, content, methods, technologies, instructional resources, and assessment criteria.
6. To develop a multilevel system of exercises and tasks aimed at recognizing and understanding prefixes, analyzing structural and structural-semantic patterns of verb formation, acquiring and differentiating prefixed verbs, and using them in contextual and communicative activities.
7. To develop a methodological model for implementing the German verb prefixation teaching system and determine the stages of its integration into the instructional process.
8. To experimentally verify the effectiveness of the developed methodological system for teaching German verb prefixation.

Scientific Novelty of the Research

- Based on a comprehensive analysis of the relevant literature, the linguistic, psychological-pedagogical, and language-didactic foundations of teaching German verb prefixation have been clarified and theoretically substantiated, taking into account the specific characteristics of non-specialist language courses.
- The language-didactic characteristics and principles underlying the organization of German verb prefix instruction have been identified and described. A methodological typology of prefixed verbs has been developed, taking into account their structural and semantic characteristics.
- A comprehensive methodological system for teaching German verb prefixation has been developed and scientifically substantiated. It comprises interconnected target-oriented, content-based, procedural, technological, and assessment components and ensures the systematic organization of the instructional process in non-specialist language courses.
- A multilevel system of exercises and tasks has been developed to facilitate the gradual formation of learners' abilities to recognize and understand prefixes, analysis structural and structural-semantic patterns of verb formation, acquire and differentiate prefixed verbs, and use them in contextual and communicative activities.
- A methodological model for implementing the German verb prefixation teaching system has been developed, integrating traditional language-didactic principles, the provisions of the Common European Framework of Reference for Languages (CEFR, Companion Volume, 2020), digital educational technologies, interactive teaching methods, and approaches to developing morphological awareness.
- Criteria, indicators, and proficiency levels for assessing learners' acquisition of German verb prefixes, development of word-formation skills, vocabulary enrichment, and communicative use of prefixed verbs have been developed and experimentally verified.

Theoretical Significance of the Research

- An original definition of the concept of "linguistic competence in the use of German prefixed verbs" has been proposed.

- The structure of the methodological system for teaching German prefixed verbs has been theoretically substantiated. Its components include instructional objectives, content, methods, technologies, instructional resources, organizational forms, and assessment criteria
- Theoretical approaches to teaching German vocabulary and word formation have been expanded and systematized by considering prefixed verbs not merely as individual lexical units but also as linguistic formations reflecting the structural and semantic regularities of the German language.

Practical Significance of the Research

The practical significance of the research is reflected in the following:

- The developed and theoretically substantiated methodological system for teaching German prefixed verbs can be applied in organizing and delivering German language courses at non-specialist faculties of higher education institutions.
- The developed principles for selecting and systematizing instructional materials, together with the proposed system of exercises and learning tasks, can contribute to the conscious acquisition of prefixed verbs, vocabulary expansion, and the development of learners' linguistic autonomy.
- The developed criteria, indicators, and proficiency levels for assessing linguistic competence in the use of German prefixed verbs can be applied to diagnose and evaluate learners' linguistic progress, as well as to monitor the effectiveness of the instructional process.

Structure and Length of the Dissertation

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and an appendix.

The dissertation is 160 pages long and includes 6 tables, 18 charts, and 1 diagram.

